

ՔՆՆԱԳՆՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՅՆՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Մկրտիչ Պեշիկպաշեանի «Քերթրումնիւն ու ճառերը», հրատարակութիւն
Ա. Չոպանեանի, Փարիզ, 1904 թ., դիմն է 4 ֆրանկ:

Այսօր. որ «Անահիտ»-ի տպարանում տառերը բաւական
մաշուած են երևում, եթէ ոչ այս հրատարակութիւնը կարող էր
չքեղ համարուել: Այս հատորի մէջ հաւաքուած են բանաստեղ-
ծի ոտանաւորներն ու ճառերը: «Ուրիշ հատոր մը պիտի պա-
րունակէ թատրերգութիւնը», ասում է հրատարակիչը: Աւելա-
ցրուած են երեք տաղեր. գրարար քերթուածների տակ դրուած
են աշխարհաբար թարգմանութիւնը և «Նօթեր» բաժնում
հրատարակիչը տալիս է զանազան բացատրութիւններ Պէշիկ-
թաշեանի բանաստեղծութիւնների մասին: Այդպիսով մեր
գրական խոշոր դէմքերից մէկի բոլոր երկերի ժողովածուն հը-
րատարակուելով՝ դիւրութիւն է տրւում լիակատար կերպով
ծանօթանալ նրա հետ. երևի երկրորդ հատորում հրատարակիչը
կ'աշխատի դնել Պէշիկթաշեանի նաև կենսագրականը, որ մին-
չև այժմ լոյս տեսած հրատարակութիւնների մէջ շատ թերի էր:

Na.

4. Ս. Էփրեկեան՝ «Պատկերագրող Բնաօխարհիկ բառարան»,
հատոր առաջին, գիրք ա., երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1903: Իւրա-
քանչիւր հատորի բաժնեգինն է 6 ռուբլի:

Պատկերներով զարդարած գեղեցիկ տպագրութիւն է այս
գիրքը, որ անհրաժեշտ է իբրև Հայաստանի աշխարհագրու-
թեան մի էնցիկլոպեդիական բառարան: Այն, ինչ տալիս է մեր
գրականութիւնը Հայաստանի զանազան տեղերի մասին, ամփո-
փուած է այս հրատարակութեան մէջ: Մի պակասութիւն, որի
վրայ արժէր ուշադրութիւն դարձնել, այն է որ և ոչ մի քար-
տէզ չէք գտնի այդ «Աշխարհագրական» բառարանում. ցանկալի

էր որ գէթ միագոյն, թէկուզ սխեմատիկ կարտէզներ լինէին։ Պէտք է ի նկատի ունենալ որ «Կիպերաի քարտէզը» կամ «Ալլիշանի «Այրարատը», «Կիլիկեան» ևայլն շատ քչերի համար են մատչելի։ Գնի կողմից բաւական սուղ է և այս «Բնաշխարհիկ բառարանը», որի կլիշէների մեծագոյն մասը բազմիցս շահագործուած են վեներտիկեան հրատարակութիւնների մէջ... ուստի պէտք է այնքան էլ չթանգացնէին ներկայ տպագրութիւնը։

Na.

Բժ. ուս. Գ. Մադախան՝ «Բժշկականութիւնի և հասարակութիւն», 12 պատկերներով, Թիֆլիզ, 1904 թ., գինն է 25 կոպ.։

Բժշկական գիտութիւնը առանձին բախտ ունի հայերիս մէջ. ոչ միայն յատուկ օրգան ունինք բժշկական և առողջապահական հարցերին նուիրուած, այլև մեծ ու փոքր, ինքնուրոյն և թարգմանական բազմաթիւ գրքեր էլ են լոյս տեսնում նոյն ճիւղին վերաբերեալ. շատ պրակտիկական ազգ ենք և մեծ ջանքեր ենք գործ դնում առողջ լինելու համար. վատ չէ, մանաւանդ որ ակսիոմա է համարուում «առողջ միտքը—առողջ մարմնի մէջ» ասացուածքը... թէև մոռացուում է յաճախ որ կան շատ առողջ մարմիններ առանց մտքի էլ...

Գրքի ամենահետաքրքրական մասը գիտական բժշկականութեան զարգացման համառօտ պատմութիւնն է։ Մի քիչ չափազանցութիւն կայ բժիշկ-ուսանող հեղինակի հետեալ խօսքերի մէջ. «Կարծում ենք՝ չենք սխալուիլ, եթէ ասենք, որ ոչ մի դասակարգ այնպիսի անձնութիւնութեամբ չի ծառայում հասարակութեան, ինչպէս բժիշկները»։ «Բժիշկը ճրագ է, որ լոյս է տալիս՝ ինքը վառուելով»։ Մենք կարծում ենք որ բժշկականութիւնը այն ձևով, ինչպէս նա գործադրուում է այժմ ներկայ հասարակական կեանքում, աւելի օգուտ է բերում ունևոր դասակարգերին, քան չքաւոր մասսաներին. բազմաթիւ են օրինակները, որոնք ասացուցում են որ մասնաւոր պրակտիկայով ապրելու անհրաժեշտութիւնը առիթ է տալիս եսական, նոյնիսկ տմարդի շահասիրական յարաբերութիւններ բժշկողի և բժշկուողների մէջ. իւրաքանչիւր հիւանդ մարդու լաւագոյն բժշկութիւնը պէտք է դառնայ հասարակութեան գործ, հասարակութեան հաշուով, այն ժամանակ զանազան Զախարինները լոկ միլիոնատէրերի համար չեն դառնալ մատչելի Մէկ խօս-